Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-194 հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

«ԱՌԳՈ-ՖԱՐՄ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության՝ «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲ ընկերության և «Առգո Ֆարմ» ՍՊ ընկերության միջև 31.01.2024թվականին կնքված «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի մատակարարման» թիվ ՍԱԲԿ_ԳՀԱՊՁԲ-24/1-6 պայմանագիրը «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲ ընկերության կողմից միակողմանի լուծելու գործարքն անվավեր ճանաչելու և որպես անվավերության հետևանք՝ «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲ ընկերության 04.10.2024թվականի թիվ ԱԱ-558 որոշումը՝ «Առգո Ֆարմ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ անվավեր ճանաչելու, «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲ ընկերության և «Առգո Ֆարմ» ՍՊ ընկերության միջև 31.01.2024թվականին կնքված «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի մատակարարման» թիվ ՍԱԲԿ_ԳՀԱՊՁԲ-24/1-6 պայմանագիրը՝ «Առգո Ֆարմ» ՍՊ ընկերության կողմից պայմանագրի կատարումից հրաժարված լինելու հիմքով լուծված ճանաչելու պահանջների մասին, մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Նաիրա Ավետիսյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am